ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբեր 2018 թվականի N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 14-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Վահագն Գուլոյանի կողմից 2006թվականին աճուրդային կարգով ձեռք բերված հողամասի նկատմամբ իրավունքի հարկադիր դադարեցման մասին,

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

3.ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

4.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբեր 2018 թվականի N 52-Ա

ՎԱՀԱԳՆ ԳՈՒԼՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2006ԹՎԱԿԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վահագն Գուլոյանի կողմից հողամասի ձեռք բերումը կատարվել է հողամասն աճուրդով վաճառելու մասին 2006 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 11 կեղծված արձանագրության օգտագործմամբ՝ ավագանին որոշում է.

1.Հողամասն աճուրդով վաճառելու մասին 2006 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 11 կեղծված արձանագրության օգտագործմամբ Վահագն Գուլոյանի կողմից Երևան-Սևան միջպետական ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքում գտնվող 5000 (հինգ հազար) քառակուսի մետր գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիր 07-051-0315-0002, կոդ 315-001) ձեռք բերման իրավահաստատող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հանձնարարականի հիման վրա կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ նյութերն ուղարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի դատախազին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար:

2.Նոր երևան եկած հանգամանքների հիման վրա վերաքննիչ բողոք ներկայացնել Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի վճիռը բեկանելու, նախկին Նուռնուս համայնքի և Վահագն Գուլոյանի միջև 2006 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված անշարժ գույքի աճուրդային վաճառքի պայմանագիրը լուծելու, հողամասի նկատմամբ Վահագն Գուլոյանի սեփականության իրավունքի դադարեցման և որպես Նուռնուս համայնքի իրավահաջորդը՝ Բյուրեղավան համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

3. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

4.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբեր 2018 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թվականի փետրվարի 10-ի N85–Ա որոշումը և Կոտայքի մարզպետի 2018թվականի հուլիսի 11-ի N1/13.2/3130-18 գրությունը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի, մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Բյուրեղավան համայնքից առաջադրել ներկայացուցիչներ՝

1)խորհրդի պետական հատվածը ներկայացնող՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանին,

2)խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող՝ Անահիդ Արմենի Խաչիկյանին՝ ծնված 1999 թվականի մայիսի 2-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

3.ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

4.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5.ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6.ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ